ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 271-Ա/2 «26» փետրվարի 2024 թ.

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2024 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը և մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն համապատասխանաբար հավելված № 1-ի և հավելված № 2-ի:

2/26/2024

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի սեպտեմբերի 26 *-ի*
№ 271 *-Ա/2 հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2024 թվականին անցկացվող խճուղավազքի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) հանրապետությունում խճուղավազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում:

2. Խնդիրներն են՝ բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարը կազմակերպում ու անցկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը և «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարը կանցկացվի Փարաքար-Էջմիածին մայրուղում՝ (ՀՀ Արմավիրի մարզ) 2024 թվականի հոկտեմբերի 12-ին:

6. Մեկնարկը՝ ՀՀ Արմավիրի մարզի Զվարթնոց պատմամշակութային արգելոց թանգարանի հարակից տարածքից (մեկնարկ դպրոցահասակ երեխաների համար)՝ ժամը 13:00-ին, իսկ 2-րդ, 3-րդ տարիքային խմբերը և գործող մարզիկների խումբը՝ Փարաքար գյուղի մերձակա տարածքից՝ ժամը 14:00-ին: Մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից երկու ժամ առաջ՝ անձը հաստատող փաստաթղթով:

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Մրցաշարին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները (սիրողական մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի

զբոսաշրջիկներ)՝ ովքեր չունեն առողջական խնդիրներ: Մրցաշարի ընթացքում առաջացած առողջական խնդիրների դեպքում պատասխանատվությունը կրում է մասնակիցը:

8. 1-ին տարիքային խմբում չեն կարող մասնակցել աթլետիկա մարզաձևով զբաղվող այն դպրոցականները, որոնք վերջին 3 տարիների ընթացքում մասնակցել են ՀՀ առաջնություններին կամ միջազգային մրցաշարերին: Վերոնշյալ դպրոցականները կարող են մասնակցել գործող մարզիկների խմբում:

9. Մրցաշարի գործող մարզիկների խմբում կարող են մասնակցել այն մարզիկները, որոնք զբաղվում են աթլետիկա մարզաձևով և վերջին 5 տարիների ընթացքում մասնակցել են աթլետիկայի ՀՀ առաջնություններին և միջազգային մրցաշարերին: Նույն պահանջը վերաբերվում է նաև օտարերկրյա աթլետ մարզիկներին:

10. Մրցաշարը կանցկացվի 3 տարիքային խմբերով՝ մեկ փուլով.

1) 1-ին տարիքային խումբ՝ (2007 - 2011 թթ. ծնված) դպրոցականներ (4 կմ) (աղջիկներ և տղաներ),

2) 2-րդ տարիքային խումբ՝ 18-ից 40 տարեկան (1984-2006 թթ. ծնված) կանայք և տղամարդիկ (10 կմ),

3) 3-րդ տարիքային խումբ՝ 41 և բարձր տարիքի (1983 թ. ծնված և բարձր) կանայք և տղամարդիկ (10 կմ),

4) գործող մարզիկների խումբ՝ տարիքային սահմանափակում չկա կանայք և տղամարդիկ (10 կմ),

5) պահանջվող պայմաններին չհամապատասխանող մասնակիցների մասնակցությունը առաջնությանը չի թույլատրվելու:

11. Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից կազմավորված մրցավարական հանձնաժողովը:

12. Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

13. Մրցաշարին 3 տարիքային և գործող մարզիկների խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) կպարգևատրվեն Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցները (Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները)՝ դրամական մրցանակներով:

14. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում են հավաստագրեր:

VI. ԾԱԽՍԵՐԸ

15. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ կամավորներին՝ սնունդ, մարզաշապիկ, գլխարկ, մրցավարներին՝ սնունդ, մարզաշապիկ, գլխարկ, պարգևավճար, մրցանակակիրներին՝ գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, մարզաշապիկներ, մասնակցության համարներ, դրամական մրցանակներ 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500.000 ՀՀ դրամ, 3-

րդ տեղ՝ 300.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 5-10-րդ տեղերը՝ 50.000-ական ՀՀ դրամ, իսկ ավագ տարիքի մասնակիցները՝ (կին, տղամարդ) 200.000-ական ՀՀ դրամ, (Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները) հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները չներառված, հուշանվերներ, ծաղկեփնջեր, տպագրական նյութեր, տարածքի ձևավորում, նկարահանման, ուղիղ եթերի ապահովում, շարժական բեմ և Լեդ էկրանի ապահովում, տրանսպորտային ծառայություն, հաղորդավարների ծառայություն, դրոշների ձեռք բերում, գրենական պիտույքներ և մրցավարներին դրամական պարգև՝ ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

16. Մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, սնունդ և ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

17. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի (անձնագրի կամ նույնականացման վկայական և առողջության վերաբերյալ տեղեկանքի պատճեններ):

1-ին՝ դպրոցական տարիքային խմբի մասնակցության հայտերի հավաքագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչությունների կողմից՝ մինչև 2024 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ:

2-րդ, 3-րդ խմբերի և գործող մարզիկների մասնակցության հայտերի հավաքագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության կողմից (Նախարարության սպորտի քաղաքականության վարչություն ներկայացնել մինչև 2024 թվականի հոկտեմբերի 6-ը ներառյալ. էլ. հասցե՝ sergey.abrahamyan@escs.am):

Հարցերի դեպքում զանգահարել Նախարարության հետևյալ հեռախոսահամարներով՝ (010) 59-96-32, (010) 59-96-33:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի Փետրվարի *26* *-ի*
№ 271 *-Ա/2 հրամանի*

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Անձնագիր, (սերիա, համար)	Բնակության վայր, հասցե	Հեռախոսի համար
1.					
2.					
3.					